Դարբաս

Բնակչություն՝ 701

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 129 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 25 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ,

Նախկին անվանումներն են Դարաբազ, Դարաբաս, Դարապաս, Դարբազ: Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1946թ-ի հրամանագրով Դարաբասը վերանվանվել է Դարբաս: Սյունիքի հին գյուղերից է և առաջին հիշատակությունը վերաբերում է 844 թ-ին: Պատմական աղբյուրները վկայում են, որ Դարբասը 15-րդ դարում ունեցել է 7 եկեղեցի և 700 ծուխ: Գյուղը հարուստ է պատմական հնություններով:
Այստեղ են գտնվում ս. Աստվածածին եկեղեցու ավերակները, այն կառուցվել է 13-րդ դարի երկրորդ կեսին՝ Տարսայիճ Օրբելյանի և նրա կին Մամախաթունի կողմից: Կան նաև գերեզմանատուն, խաչքարեր՝ 14-15 դարերի տապանագրերով, և կամուրջ՝ կառուցված 1675թ.: Տեղացիները այն կոչում են "Արզումանի կամուրջ":

Մոսկվայաբնակ Արամ և Արմեն Ստեփանյաններ գործարար եղբայրների կողմից 2010 թվականին Դարբաս գյուղում կառուցվել է Սբ. Ստեփանոս եկեղեցին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2743 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2227 հա, որից՝
- վարելահող՝ 670 հա, բազմամյա տնկարկ՝ 48 հա, արոտ՝ 867 հա, այլ հողատեսք՝ 643 հա
- բնակավայրերի հողեր՝ 113 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 9 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 11 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4 հա,
- անտառային հողեր՝ 271 հա, որից անտառածածկ՝ 271 հա
- ջրային հողեր՝ 108 հա